ՉԻՆԳԻԶ ԱՅԹՄԱՏՈՎ

Վասիլա

Սասակյան Վեր

որոս հնար

Ծերուկ Զորդոնը տուն վերադարձավ ինչ-որ անհասկանալի տեսքով: Գուցե շփոթված ու անհանգիստ էր, գուցե, ընդհակառակը, ճնշված ու տխուր, մի խոսքով՝ կինն անմիջապես հասկացավ՝ նրան ինչ-որ բան է պատահել: Եվ երբ իմացավ, թե բանն ինչ է, այնքան վարմացավ, որ

չգիտեր ինչ անել: Զորդոնը տարօրինակ մի բան էր մտածել, որը ողջամիտ հայացք ունենալու դեպքում կարող էր ծերունական խենթություն, անմտություն թվալ, ինչ ուզում եք, բայց ոչ երբեք սթափ դատող մարդու արարք:

Ծերունկը մի տղա էր ունեցել, որը քսան տարի առաջ ռազմաճակատում վոիվել էր: Նա վոիվել էր բոլորովին ջահել, և Զորդոնից՝ իրենից բացի, թերևս ոչ ոք նրան այլևս չէր հիշում: Եվ ինքը Զորդոնն էլ, ինչքան ժամանակ որ միասին ապրում են, կարծես թե երբեք նրա մասին չէր խոսել: Եվ ահա հանկարծ ծերունկը վճռել է գնալ այնտեղ, որտեղ պատերազմից առաջ տղան աշխատել էր որպես ուսուցիչ:

— Ինձ շարունակ թվում է, որ նա կենդանի է, որ հիմա էլ կարծես թե այնտեղ է: Սիրտս քաշում է ինձ այնտեղ, ուզում եմ նրան տեսնել,— ասաց ծերունկը:

Կինը ահով նայեց նրան, սկսեց ուզեց ծաղրուծանակ անել. «Խելքդ գլխի՞դ է, չե՞ս գժվել»,— բայց ժամանակին վսպեց իրեն: Այն բոլորից, թե ինչպես էին ասվել այդ խոսքերը, ինչպես սովորական ու հանգիստ էին նայում նրա աչքերը, ձայնի համոզվածության ու ճշմարտացիության ինչերանգից կինը հասկացավ, որ մարդն այդ ասաց միանգամայն լուրջ և իհարկե, դատողությունը տեղն է: Նա այդ բոպեին զգաց, որ ամուսնու ցանկության ամբողջ անհեթեթությամբ հանդերձ, ծերացած, դարչնագույն դեմքով, բարի աչքերի կնճռապատ կկոցումով, ճերմակահեր մորուքով, մեծ ձկների նման ծնկներին հանգչող խոշոր, հոգնած ձեռքերով այդ մարդու խոսքը՝ երեխայի խոսքի նման կտրելը հանցանք կլիներ:

— Էդ դեպքում ինչու՞ ավելի առաջ չէիր գնում,— զգուշությամբ հարցրեց նա:

— Չգիտեմ,— հոգոց հանելով պատասխանեց Զորդոնը:— Իսկ հիմա ահա քաշում է: Քանի կենդանի եմ, պետք է գնամ էնտեղ, սիրտս էդպես է ասում: Վաղը լուսաբացին կգնամ:

— Դու գիտես, քո գործն է:

Նա ենթադրում էր, թե ծերունկը կփոշմանի: Իսկապես, ինչի՞ համար է գնում, ի՞նչ պիտի գտնի այնտեղ հիմա, հեռավոր անծանոթ ափում, ի՞նչ պիտի տեսնի: Բայց նրա սպասելիքները չարդարացան: Զորդոնի մտքովն էլ չէր անցնում մտադրությունը փոխել

Կոնդի տակի գյուղը վաղուց արդեն քնել էր, բոլոր լուսամուտները խավար էին, և միայն Չորդոնի տանն էր մերթ ընդ մերթ լույս վառվում: Ծերուկը ուղղակի հանգիստ չէր գտնում: Գիշերվա ընթացքում մի քանի անգամ վեր կացավ. հագնվեց, բակ դուրս եկավ և ամեն անգամ ձիու մուրին կես խուրձ առվույտ նետեց: Այն էլ ոչ թե սպասահական խուրձ, այլ ամենալավը, առաջին խոտհարքի առվույտ: Իսկ դրա համար չէր սիսոսել ժամանակից առաջ քանդել մարագի կտրին դարսած խոտը: Ուրիշ անգամ նա դժվար թե այդպիսի շռայլություն թույլ տար իրեն, մինչև ձմեռ երբեք իրեն թույլ չէր տալիս խոտին ձեռք տալ, և՛ կովը, և՛ ձին քշում էր արածելու խրճիթների եռնը, ամայացած բանջարանոցներում, աշնանախոտերի մեջ, աշնանային մացառներում ու խոպանում: Իսկ այժմ ոչինչ չէր խնայում և նույնիսկ ճանապարհի համար գարի էր լցրել խուրջինը:

Ահա այսպես ամբողջ գիշերը չարչարվում էր: Կինն էլ չէր քնում: Նա քնած էր ձևանում, որ չխանգարի ծերուկին կբաղվելու իր գործով, իսկ երբ վերջինս տնից դուրս էր գալիս, ծանր հառաչում էր: Ամուսնուն հանդիպելն անօգուտ էր: Հիմա էլ կարող էր ասել. «Մի մտածիր, ախր ու՞ր ես գնում: Ինչի՞ համար: Հո փոքր երեխա չես դարձել, չէ՞ որ մարդիկ վրադ կծիծաղեն»: Եվ սակայն լռում էր: Վախենում էր, որ ծերուկն իրեն կարող է ասել. «Եթե նրա հարազատ մայրը լինեիր, ինձ չէիր աշխատի ետ սահել»: Նա այդպիսի խոսքեր լսել չէր ուզում: Այո՛, նա նրա որդուն չէր տեսել, չգիտեր, թե ինչպիսին է եղել: Պառավ Չորդոնը մի տասը տարի առաջ էր մեռել, իսկ ինքը ծերուկի երկրորդ կինն էր: Առանց այն էլ նրա համար տհաճ էր, շարունակ անտեղի մեղավոր էր զգում իրեն ամուսնու առջև, որ իրենց ընտանիքներով քաղաքում ապրող նրա երկու աղջիկները, հայտնի չէր, թե ինչու, երբեք չէին գալիս, ոչ մի կապ չէին պահպանում իրենց հետ, եթե չհաշվենք այն, որ ինքը՝ Չորդոնը երբեմն, շատ հազվադեպ, այցելում էր նրանց, երբ քաղաքում էր լինում: Ամուսինը նրանց մասին համարյա ոչինչ չէր պատմում, ինքն էլ աշխատում էր հարցուփորձ չանել: Խորթ մայրն այդպիսի դեպքերում ավելի լավ է մի կողմ քաշվի, այդպես ավելի հանգիստ կլինի: Մասամբ դրա համար էլ նա հաշտվեց ծերուկի այդ արտասովոր մտա-

դրության հետ: Իսկ հետո խորհրդածելով վճռեց. «Գուցե մարդն էդպիսի մի կարոտ ունի: Թող գնա իսկապես, հոգին թեթևացնի, սիրտը հանգստացնի: Վիշտն ավելի թեթև կթվա...»

Վաղ լուսաբացին Զորդոնը վեր կացավ: Գնաց ձին թամբեց, հետո վերադարձավ հագավ իր նոր չեպկենը, վերցրեց պատից կախված մտրակը և կիսախավարի մեջ կռանալով կնոջ անկողնին, շշուկով ասաց.

— Նասիպկա՛ն, գնում եմ, մի անհանգստանա, հենց վաղը ուշ գիշերին կվերադառնամ: Լսու՞մ ես: Ի՞նչ ես սուս կացել, հը՞: Հասկացիր. չէ՞ որ նա որդիս է: Թեև ամեն ինչ գիտեմ, բայց սիրտս քաշում է էնտեղերը տեսնել: Հոգիս տառապում է, հասկացիր...

Կինը լուռ բարձրացավ անկողնում և մթության մեջ ասես իսկապես տեսնելով, թե ինչ է դրել գլխին, մոթմոթալով հանդիմանեց ծերուկին:

— Մի նայիր գլխարկիդ: Քառասուն կարկատան ունի: Հո փայտ բերելու չես գնում, հյուր ես գնում:— Եվ իր գլխավերևի սնդուկի կափարիչը շոշափելով, հանեց ամուսնու այնտեղ պահված գառնենու գլխարկը և տվեց նրան.— Ա՛ռ, հագիր: Հին գլխարկով անհարմար է:

Զորդոնը գլխարկը փոխեց և ուղղվեց դեպի դուռը:

— Սպասի՛ր,— ձայն տվեց կինը:— Պատուհանի ետևից վերցրու այ էն ուտելիքի կապոցը, դիր խուրջինդ: Մինչև երեկո ճամփին կսովածանաս:

Զորդոնն ուզեց ասել՝ «շնորհակալ եմ», բայց լռեց. կնոջը «շնորհակալ եմ» ասելն անսովոր էր:

Գյուղը դեռ քնած էր, երբ Զորդոնը իր կամբիկին հեծած ետնամասերով անցավ փողոցները, որպեսզի իսուր տեղը շներին ոտքի չհանի, և գյուղի ծայրին շրջվեց սայլուղին, որը դեպի լեռներն էր տանում:

Երեկ, կեսօրին հենց այս ճանապարհով, հին, չորությունից ճաքճքած երկանիվին փայտ բարձած, նույն այս աշխետ կամբիկը լծած Զորդոնը տուն էր վերադառնում: Հարկավոր էր ձմեռվա փայտի պաշար տեսնել:

Նա Փոքր ձորի մուտքի մոտ վայրի թփուտի չոր ճյուղեր կտրտեց, սայլը լիքը բեռնեց և ինքը թամբին նստելով, ոտքերը

քեզիներին դրած, անշտապ, երբեմն նիրհելով, իր համար ճանփով գնում էր: Անիվները սովորականի նման դարուփոսերում դղրդում էին, սայլը ճռռում էր, օրը խաղաղ էր, տաք:

Աշնանային այնպիսի մի պահ է լինում, երբ օրեցօր եղանակը պետք է ցրտի, բայց մինչ այդ, ասես հրաժեշտ տալով, բացառիկ պայծառ ու պարզ օրեր են լինում: Բարձունքից այս անգամ ամբողջ շրջակայքն էր երևում, հովտի գյուղերը մուգ, լուսաթափանց այգիներով և տների ճերմակ պատերով, ծխախոտի տնկարանների արմատի վրա չորացած ժանգագույն թփերը, աշնանավար անտառ տրակտորները, բարձունքում թռչող արծաթագույն ինքնաթիռը և հորիզոնում ծխի գորշկապտավուն քարացած ծածկույթը քաղաքի ցածրավայրի վրա: Եվ այդ ամբողջ աշխարհի վերևում սավառնում էր ճախրող թռչունների մի սրագընթաց, մուգ, համր ալիք:

Չորդոնը գիտեր՝ դրանք ծիծեռնակներ էին: Դեռ առավոտյան, երբ ցախի էր գնում, ծիծեռնակները երամներով հավաքվել էին հեռագրալարերի վրա: Երկար-երկար շարքերով նստել էին դեմ դիմաց և անշարժ մնում էին նստած, բոլորն իրար նման ճերմակ կրծքով, բոլորն իրար նման նրբատաշ գլխիկներով, բոլորն իրար նման պոչերի երկատված փայլուն նետերով: Նստած էին խաղաղ, երբեմն միայն կուսպ ծվլոց էին փոխանակում և, թվում էր, սպասում են ինչ-որ հատուկ ժամի, որպեսզի բոլորը միասին տեղից վեր կենան ու ճանապարհ ընկնեն: Եվ ծիծեռնակների այդ հավաքի մեջ ինչ-որ հանդիսավոր, իր խստությամբ ու անթերի գեղեցկությամբ հրապուրիչ բան կար: «Սրանք քեզ համար ճնճղուկներ չեն»,— հպարտությամբ մտածեց Չորդոնը:

Եվ ահա այժմ, իր աչքի առաջ ծիծառները թռան գնացին: Նրանք հրաժեշտի շրջաններ կատարեցին այն երկրի վերևում, որտեղ անց էին կացրել ամառը. օդի մեջ սավառնում էին անշշուկ, սրընթաց, վիթխարի արեգակի դեմ հուրհրատող, պսպղուն սև երամով:

Չորդոնը երկար հետևում էր նրանց թռիչքին: Ահա նրանք ևս մի վերջին լայն շրջան կատարեցին աշնանային ամայի այգու վերևում, երամը ցնցվեց, խառնվեց, նորից կարգի ընկավ և սկսեց արագ հեռանալ դեպի մեծ տափաստանները: Նա ավելի և ավելի փոքր էր դառնում, հալվում էր երկնքի

լայնորում, ինչպես հեռավոր երգի արձագանքը ընդարձակ տարածություններում, և վերջապես վերածվեց մի սև կետի: Ծիծեռնակները չվեցին անծանոթ երկրներ: Դեռ առավոտյան նրանց կարելի էր տեսնել, հիանալ նրանցով, լսել նրանց ճռվողյունը: Եվ ինչ-որ մի անհասկանալի, քաղցր թախիծ հարբեցնող ալիքով խուժեց նրա հոգին, արցունքները պղտորեցին աչքերը, ծերուկն այլևս ոչինչ չէր տեսնում, բայց շարունակում էր նայել դեպի երկինք և հառաչել չգիտես ինչի համար, ինչ-որ հարազատ ու մոտիկ, անվերադարձ կորցրած բանի համար: Եթե ջահել լիներ, հրաժեշտի երգը կերգեր:

Չորդոնն իր խոհերից արթնացավ, երբ մոտիկից լսեց սմբակների դոփյուն: Լավ, թեթևաշարժ ձիով ինչ-որ մեկը բլրակով բարձրանում էր: Չորդոնը նրան անմիջապես չճանաչեց: Պարզվեց, որ Սապարալին էր, հարևան գյուղից մի ծերուկ: Նրանք իրար լավ չէին ճանաչում, երբեմն հանդիպում էին հոգեհացերին կամ հարսանիքներին, բարևում էին իրար և դրանով էլ սպառվում էր նրանց ծանոթությունը: Սապարալին, ըստ երևույթին, ինչ-որ տեղ հյուր էր գնում: Նրա հագին վելվետի նոր չապան էր, նոր իշիգներ՝ նոր սրածայր կրկնակոշիկներով, գլխին աղվեսի թավամաշ տեբետեյ և ձեռքին կարմիր արոսենու կոթով մտրակ:

— Էդ ի՞նչ ես մտքերի մեջ խորասուզվել, դարբին,— բարձր, սիրալիր ձայն տվեց Սապարալին և սանձերը ձգեց:

Այո՛, մի ժամանակ Չորդոնը դարբին էր:

— Ծիծեռնակները չվում են,— շփոթված ասաց Չորդոնը:

— Ի՞նչ: Ծիծեռնակնե՞րը: Որտե՞ղ են:

— Արդեն չվեցին:

— Թող չվեն իրենց համար: Ցա՞խ ես տանում:

— Այո, ձմռան համար: Իսկ դու ու՞ր ես գնում:

Սապարալիի կարմրաթուշ, դեռ ջահելատես, սևաչորուք դեմքին ինքնագոհ մի ժպիտ ծավալվեց.

— Տղայիս մոտ: Չէ՞ որ նա Ակ-Սայում, մեծ լեռների ստորոտում սովխոզի դիրեկտոր է,— և մտրակի լայն թափահարումով Սապարալին ցույց տվեց այն կողմը:

— Լսել եմ Ակ-Սայի մասին, լսել եմ,— գլխով արեց Չորդոնը:

— Ահա և գնում եմ: Տղաս ապսպրել է. «Թող,— ասում

է,— հայրս մի երկու օրով գա»: Թեև նրանք էնտեղ պետեր են, բայց առանց մեկ՝ ծերերիս, յոլա չեն գնա: Թոռս է պսակվում: Պետք է հարսանիքը նախապատրաստեմ, որ ամեն ինչ սովորույթի համաձայն լինի, հյուրեր շատ կլինեն, մտածում եմ ձիարշավ կազմակերպել:

Եվ Սապարալին սկսեց պատմել որդու սովխոզի գործերի մասին, որ այս տարի հարուստ բերրի են խուզել, հովիվները մեծ պարգև-վարձատրություն են ստացել, ժողովուրդն իր դիրեկտորից գոհ է, բարի լուր կա, որ կարծես թե որդուն պարգևատրման են ներկայացրել:

Այդ բոլորը լավ էր, բայց Չորդոնը հիմա այլ բան էր մտածում, նա հանկարծ զգաց իր վաղեմի թախիծը, որ ցմահ լռության էր դատապարտվել իր հոգու խորքերում, բայց հավերժ կենդանի էր, ինքնակոչ այն թախիծը, որը մեծ ցավով արձագանքեց սրտում, երբ ծիծեռնակները չվում էին: Եվ այժմ այդ թախիծը նոր ուժով, մի այրող բոցով բարձրացավ նրա կրծքում: Դա որդու կարոտն էր, այո՛, նրա, որ վաղուց հեռացել էր այս աշխարհից: Բայց չէ՞ որ մի ժամանակ նա էլ աշխատում էր այնտեղ, Ակ-Սայի մոտերքում և նույնպես մի ժամանակ հորը հրավիրում էր գալ, այցելել իրեն: Եվ հաշիվ չտալով իրեն, թե ինչ է պատրաստվում անել, Չորդոնը խոսեց, ասես կառանցելով, ընդհատելով Սապարալիին.

— Ինձ էլ է տղաս հրավիրել:

— Մի՞թե քո տղան էլ է այնտեղ:

— Այո,— սարսափից սառչելով շշնջաց Չորդոնը:

— Իսկ ես չգիտեի,— պարպասրտորեն ուսերը թոթվեց Սապարալին:— Դե որ էդպես է, լավ է: Որտեղ ուզում են լինեն, աստված նրանց առողջություն տա: Մնաս բարով,— այս խոսքերն ասելով, Սապարալին ձին քշեց:

Եվ հենց որ նա հեռացավ, Չորդոնը ուշքի եկավ: Լռության, ամայության վրնգուն անհունությունը որոտի պես ցնցեց նրան. «Էդ ի՞նչ ասացի: Սուտ, անճիշտ բան ասացի: Ինչու՞...»

Չորդոնը ցած թռավ ու ճանապարհով վազեց Սապարալիի ետևից:

— Կա՛նգ առ, Սապարալի, կա՛նգ առ,— բղավեց ու վազեց դեպի նա, որ ներողություն խնդրի, որ ճշմարտությունն ասի:

Սապարալին ձիու գլուխը շրջեց.

— Ի՞նչ, ի՞նչ է պատահել քեզ,— անհանգստացավ նա։

Զորդոնը հևասպառ մոտ վազեց, ուզեց ամեն ինչ բացատրել, բայց այդ պահին նորից մի անկասելի ուժ, որդու մասին, որպես կենդանի մարդու, մտածելու ցանկություն թույլ չտվեց, որ Զորդոնն ասի ճշմարտությունն այն բանից հետո, երբ որդին հենց նոր պատահմամբ հարություն էր առել իր իսկ սեփական շուրթերին և արդեն ապրում էր ուրիշ մի մարդու գիտակցության մեջ։ Նա չէր կարող անմիջապես նորից նրան թաղել։ Չհամարձակվեց ասել, որ տղան վաղուց չկա, որ նա վաղուց կոիվել է պատերազմում։ Զորդոնն ուզում էր, որ որդին մի քիչ ապրի, թեկուզ մի քանի րոպե։ Հետո կասի, կհասցնի ասել...

— Նավայ չունե՞ս։ Առանց ծխախոտի մեռնում եմ, խնդրում եմ, տուր,— խնդրեց Զորդոնը։

— Օ՛, մահը քեզ տանի, լավ վախեցրիր ինձ,— Սապարալին թեթևացած շունչ քաշեց և ձեռքը գրպանը տարավ ծխախոտ հանելու։— Վերցրու, ափդ բաց արա։ Իմ փորձով գիտեմ էդ անիծյալ ծխախոտի բանը,— ասաց ապակե անոթից Զորդոնի ափի մեջ նավայի մի կույտ լցնելով։— Էդ ի՞նչ է ձեռքդ դողում, դարբի՛ն, ծերացել ես։

— Այո՛, պատերազմի ժամանակ մուրճը շատ թափով խփեցի, դրան ավելացրած ծերությունը,— պատասխանեց Զորդոնը։— Ներիր, որ քեզ ետ պահեցի։

— Մեծ դժբախտություն չէ։ Դե լավ, ես գնամ։

— Բարի ճանապարհ,— ասաց Զորդոնը։

Այժմ արդեն մարդուն ետ պահելն անհարմար էր, և Զորդոնը նույնիսկ ուրախացավ, որ Սապարալին արագ վարգեց, և ինքն ստիպված չեղավ որդու մահվան մասին խոսել։

Սապարալիի հեռանալուց հետո Զորդոնը միառժամանակ ևս մտախոհ կանգնած մնաց ճանապարհին, հետո ափը բացեց, ծխախոտը գետին թափեց ու վերադարձավ դեպի սայլը։

Քայլում էր դանդաղ, գլխահակ։ «Էս ի՞նչ արեցի, խելքս թոցրել եմ»,— քրթմնջաց, հետո կանգ առավ ճանապարհի մեջտեղը, մտածկոտ շուրջը դիտեց, հետո նայեց դեպի մեծ տափաստանների վերևի երկնային բարձունքները, այնտեղ, ուր թռավ թռչունների երամը, և շշնջաց. «Ո՛չ, ես որդի ունեմ,

կա՛, նա կենդանի է։— Եվ հետո հանկարծ ցավով ու խռպոտ գոչեց.— Ես ունեմ որդի, ունեմ, ես էլ կգնամ որդուս մոտ, կտեսնեմ նրան, կտեսնեմ»։ Եվ վերստին սկսվեց։

Դեպի գյուղ տանող ամբողջ ճանապարհին Զորդոնն ինքն իրեն հանդիսանում էր, որ այդպես հուզվել պետք չէ, որ եղածն արդեն չես վերադարձնի, և, այնուամենայնիվ, որդու ապրելը գնալու ցանկությունը նրա մեջ հրդեհի նման բորբոքվեց։ Այդպես պիտի լիներ։ Այդ հրդեհը վաղուց, շատ-շատ տարիներ էր նրա հոգում մարմրուս։ Նա հաճախ էր մտածում, երբեմն հափշտակությամբ երազում, թե ինչպես գնա այնտեղ, ծնրադրելու այն վայրերին, որտեղ բանակ գնալուց առաջ որդին անց էր կացրել իր վերջին օրերը։ Իսկ Սասպարպիի հետ հանդիպումը պատահական կայծ եղավ միայն։ Եվ այժմ Զորդոնի գիտակցության մեջ, իրականությանը բոլորովին չենթարկվելով, որդին կենդանացել էր. տարիները տարօրինակ կերպով խառնվել էին, ցանկալին իրականություն էր դարձել, երևակայությունը՝ եղելություն։ Նա պատկերացնում էր, թե ինչպես, օրինակ, ինքը կգնա այդ ապրը, որդին ինչպես կընդունի իրեն, ինչի մասին կխոսեն։ Հավանորեն կուրախանա. «Հա՛յր, վերջապես եկար» և կմոտենա իրեն։

«Եկա, հարազատս, բարև։ Դու միշտ նույնն ես։ Իսկ ես, ինչպես տեսնում ես, ծերացել եմ»։

«Չէ, հայր, այնքան էլ ծեր չես, պարզապես շատ ժամանակ է անցել։ Ինչու՞ այդքան ժամանակ չէիր գալիս։ Ինչքա՞ն ժամանակ է անցել. քսան տարի, գուցե ավելի։ Թե՞ ինձ չէիր կարոտում»։

«Ինչպե՞ս թե չէի կարոտում։ Ամբողջ կյանքումս կարոտել եմ։ Ներիր, որ այդքան երկար եմ քեզ ստիպել սպասել, ոչ մի կերպ չէր հաջողվում։ Ինքդ գիտես, մայրդ մեռավ, թաղեցինք։ Երբ դու պատերազմում կռիվեցիր, դրանից հետո ես անկողին ընկավ ու այլևս չբարձրացավ։ Իսկ այ հիմա եկել եմ քո հիշատակը հարգելու։ Եկել եմ երկրպագելու այն մարդկանց, որոնց մեջ դու ապրել ես։ Ուզում եմ երկրպագել այս հողին, այս լեռներին, օդին, որը դու շնչել ես, ջրին, որը խմել ես։ Ահա և տեսնվեցինք, որդի՛ս։ Ի՞նչ ես նայում, տուր, ցույց տուր դպրոցդ, ցույց տուր ախլդ, այնքան շատ էիր պատմում նրա մասին...»

Չորդոնը կուր էր աշխատում հիշել և այդպես էլ չ՝ հիշեց այն որսորդի անունը, որի տանը ապրում էր իր Սուլթանը: Գիտեր միայն, որ նա լավ մարդ էր, որդին սիրում էր նրան. հիմա նա երևի յոթանասունին մոտ կլինի: Տեսնես կենդանի՞ է, թե՞ մեռել է: Նա հաճախ էր ապսպրում, որ Չորդոնը հյուր գնա, ռրսի գնա որսկան քարարծվի հետ: Տեսնես այն քարարծիվը կա՞: Չէ՞ որ արծիվները երկար են ապրում:

Կարծես թե որսորդը տղա ուներ: Սովորում էր առաջին դասարանում Սուլթանի մոտ, իսկ երբ երկրորդում էր, արդեն պատերազմն սկսվեց: Այդ մանչուկը հիմա հավանորեն ընտանիք ունի: Որսորդի կինը բարի կին էր: Բայց նրա գործը դժվար էր. և՛ կոլտնտեսությունում էր աշխատում, և՛ տան տնտեսությունը վարում: Մի անգամ նա Սուլթանին խնդրել էր, որ մի կերպ երկու քերծե շներին տանի, թողնի հոր մոտ: Ուժը չէր պատում ամբողջ ոհմակի համար լափ եփել: Սուլթանը մի անգամ այդպես էլ արեց, բերեց իր հետ կողքերին դեղին բծերով մի ապիտակ քերծե: Օ՜խ, ի՜նչ շուն էր: Այնտեղ միայն՝ Մեծ ձյունոտ լեռներում կարող են լինել այդպիսի գեղեցիկ, ջրածիծառի նման սրընթաց քերծեներ: Դրանք են վայրի այծյամներին թակարդը քշում: Իսկ առավոտյան Սուլթանը, այնուամենայնիվ, շանը ետ տարավ: «Տանտերը խիստ կվիրավորվի,— ասաց:— Ավելի լավ է ես կօգնեմ լափը եփելուն»: Եվ հեքիաթային քերծեն վազեց հեծանիվի ետևից: Չորդոնը ափսոսում էր բաժանվել նրանից, բայց հասկանում էր, որ որսորդի համար շունը շատ կարևոր է, իսկ ինքը դարբնոցից դուրս չի գալիս: Այդ սպիտակ տայգանները վերացել են տեսնե՞ն, թե դեռ հալածում են աղվեսներին:

Այդ մասին մտածելով, Չորդոնը իր համար մի համոզիչ առիթ էլ գտավ: Այո՛, ինքը պարտավոր է այդ մարդու մոտ գնալ: Եթե վախճանվել է, նրա ամյունին երկրպագել, եթե ողջ է, նրա ձեռքը սեղմել, շնորհակալություն հայտնել որդու նկատմամբ հոգատարության համար:

Չորդոնն արգելում էր իրեն մտածել միայն մի հանգամանքի մասին: Հենց որ այդ միտքը երևան էր գալիս, նա կանապան հոգսերով խլացնում էր. սկսում էր մտքում հաշիվ անել, թե այս ձմեռ կորտոֆիլն ու չոր խոտն ինչ գին կունե-

նան, ոչխարը մորթելը երբ է ավելի հարմար, հորթը պահի՞, թե՞ ծախի...

Նա աշխատում էր չմտածել, որովհետև ամեն ինչ արդեն շատ անգամ էր մտածված ու կշռադատված: Ե՛վ անքուն գիշերներով, և՛ դարբնոցում այդ միտքը շատ տարիներ մուրճի հետ խփվել էր սայլին, թրծվել հնոցում, կոփվել ջրում: Եվ ինքն իրեն վաղուց արդեն որոշել էր, որ սատված միայն կարող է դատել՝ որտեղացի է ինքը, թե ոչ... Եթե այնպես պատահի, որ մյուս աշխարհում տեսնվի որդու հետ, ամեն ինչ կպատմի նրան, ինչպես եղել է... Բայց ներումն չի հայցի, ո՛չ: Նույնիսկ այն ժամանակ, երբ քաղաքում ապրող նրա աղջիկները հոր երեսին հրեշավոր խոսքեր ասացին, Զորդոնը մեղա չեկավ: Զորդոնը լռեց...

Իսկ աղջիկները մինչև հիմա չեն կարողանում ներել նրան այդ սարսափելի դեպքը: Դա պատահեց Սուլթանին ռազմաճակատ ուղարկելու օրերին քաղաքի կայարանում:

1941 թվականի հոկտեմբերին ինչ-որ մեկը դարբնոց՝ Զորդոնի մոտ վազեց, թե՝ շտապիր, իբր, տուն գնա, տղադ է եկել հրաժեշտ տալու: Զորդոնն ինչպես որ կար, դարբնի խանձված, մրոտ գոգնոցով հենց տուն շտապեց: Ականջներում դեռ սալի զրնգոցն էր: Նա շտապով քայլում էր փողոցով և այնքան էլ չէր հավատում. կարծես թե որդին վինակոչվելու համար դեռ ջահել էր: Բայց պարզվեց, որ ճիշտ էր: Սուլթանը ինչ-որ մեկի ձիով շրջկենտրոնից պացի՞ եկել էր հիվանդ մորը տեսնելու: Արդեն կես տարի էր, որ սա չէր ապաքինվում: Հորը խնդրեց գալ քաղաք կայարանում ուղեկցելու: Մի կարգին չխոսեցին և, ինչպես պետք էր, հրաժեշտ տալ չհասցրին: Դե, ժամանակն էլ ինչպիսին էր. Ինչքան չասված խոսքեր, ինչքան չարտահայտված մտքեր, մնացին, ամեն մեկի մեջ: Եվ դժվար թե որևէ մեկին հաջողվի երբևէ արտահայտել այն բոլորը, ինչ այն ժամանակ կար ժողովրդի հոգում...

Զորդոնը վարգարշավով քաղաք հասավ: Մոտ երեսուն կիլոմետրը այնպիսի թափով քշեց, որ ձիուն ճանապարհին ուժասպառ արեց: Եվ առաջին բանը, որ աչքին ընկավ և շշմեցրեց իրեն, կայարանի առջևի ամբոխն էր, խառնաշփոթությունը: Ով և ինչ ասես, որ չկար այդտեղ: Կողերին կարմիր աստառներով բեռնատար մեքենաներ, հարդով ու խոտով բեռնված

սայլեր ու արաբաներ, լծարձակված ու թամբած ձիեր, իսկ երկաթգծերին՝ շոգեքարշի սուլոցներ, վագոնների ճռնչյուն: Եվ այդ ամբողջ կուտակման մեջ՝ գյուղերից, ավլներից, քաղաքից հավաքված ժողովուրդ:

Զորդոնը ձիուց իջավ: Չին կապեց առաջին պատահած սայլին բալմաթիվ այլ ձիերի մեջ և գնաց որդուն գտնելու:

Քայլում էր, ժողովրդի արանքում հրմշտվում, հարցուփորձ անում. Ասացին, որ կորակոչվածները մերձկայարանային կորակայանում են, նրանց այնտեղ առանձին են պահում և բաց չեն թողնում, որովհետև շուտով ուղարկելու են:

Մի կերպ կորակայանի մոտ հասավ: Այնտեղ, պատի մյուս կողմում շարապաներ էին դասավորում, հրամաններ էին հընչում, անվանականչ էր տեղի ունենում: Զորդոնը շփոթված կանգնած էր. այստեղ ինչպե՞ս մարդ գտնես: Ծառներն էլ էին խանգարում ջոկելու շարք կանգնած մարդկանց: Եվ հանկարծ իրենից ոչ հեռու լսեց. «Հա՛յր, հա՛յր, էստեղ եկ»: Երկու աղջիկներն էլ ձեռքները թափահարելով իրեն էին կանչում: Նրանք կանգնած էին կորակայանի մուտքի մոտ: Նրանց մոտ խցկվելով, Զորդոնը պատից այն կողմ շարքի մեջ տեսավ որդուն: Սա ևս նկատեց հորը, ձեռքը թափահարեց, ժպտաց. Ինչ-որ տագնապահույզ, շփոթված ժպտաց: Խղճաց որդուն: Բոլորովին պատանի էր, անբեղ, միայն հասակով էր մյուսներին հավասար, իսկ էնպես, ուսերն ու կերպարանքը տղայական էին: Նա դեռ աճում էր, և պետք է աճեր: Զորդոնը նրա մեջ իրեն էր տեսնում, տղան ամուր, ուժեղ տղամարդ էր դառնալու: Էլի մի երկու տարի, և պարթև երիտասարդ կստացվեր նրանից:

Հետագայում տղայի մասին մտածելիս, Զորդոնը շատ անգամ էր ցանկացել ինքն իր համար պարզել, թե ինչ մի բան կար նրա մեջ, որն ստիպում էր հարգել նրան, ոչ թե պարզապես սիրել,— ամենքն էլ սիրում են,— այլ հենց փոքրությունից հարգել իբրև խելացի, իրեն հավասար մարդու, թեև նաև բավականաչափ կապը կտրածն էր: Բայց այդպես էլ չէր կարողացել իր համար պարզել, թե ինչու էր այդպես: Հատկապես այն ժամանակից սկսած, երբ նա ուսուցիչ դարձավ: Զորդոնը մեծ հարգանքով էր վերաբերվում նրան, լրջորեն էր նրա հետ հաշվի նստում, չնայած որ որդին երբեմն գալիս էր, մոռանալով պիոներական վկկապը հանել. նա դպրոցում պիոներջոկա-

տավար էր: Պատանին դեռ տաքարյուն էր, բուռն, բայց Չորդոնը համոզված էր, ժամանակի ընթացքում նրա բնավորությունը կկայունանար: Մարդուն չպետք է խանգարել, ձանձրալիորեն խրատել: Եվ նա ինքն այդ դեպքում իր ճամփան կգտնի, այդպես էր մտածում Չորդոնը: Եվ, հնարավոր է. որ հենց դա աղջիկների հետ ընդհարման պատճառ դարձավ: Սրանք երկուսն էլ,— ավագը՝ Զեյնեշը և կրտսերը՝ Սալիկան, սովորել էին քաղաքում: Ամուսնացան և քաղաքաբնակ դարձան: Նրանք Սուլթանին էլ քաղաք տարան, այստեղ նա մասնավարժական տեխնիկում ավարտեց և արդեն մի տարի էր, ինչ աշխատում էր որպես ուսուցիչ:

Երբ Չորդոնը վերջապես աղջիկներին մոտեցավ, նրանք, չգիտես ինչու, սկսեցին նրան ամբոխի միջից դուրս բերել: Թրջված, չարացած, նրանք կիսաձայն հայհոյում էին եղբորը, մեջընկան, անմիտ տղա, հիմար անվանում: Ուր որ շարժվում էին, չորս կողմը մարդաշատ էր, աղջիկներն շտապում ու ջղայնանում էին, ուստի հենց հրապարակում, հրմշտոցի մեջ նրանց և հոր միջև այսպիսի խոսակցություն տեղի ունեցավ.

— Գիտե՞ս, որ որդիդ կամավոր է գնում:

— Ոչ,— վարմացավ Չորդոնը:— Իսկ ի՞նչ կա:

— Մենք կանգահարեցինք շրջան, կինոմիսարիատ, պարզվեց, որ նա ինքն է երեսը դեմ արել, դիմում տվել, խնդրել, որ իրեն պատերազմ ուղարկեն: Հասկանու՞մ ես:

— Նա ըստ տարիքի դեռ ջահել է, հասկանու՞մ ես բանն ինչ է:

— Ուրեմն համարել է, որ այդպես է հարկավոր:

— Հարկավո՞ր:— Եվ այստեղ աղջիկները իրար բերանից խոսք խլելով հարձակվեցին հոր վրա:— Ինչու՞ չես հասկանում, հա՛յր: Հերիք չէ, որ մեր ամուսիններն այնտեղ են: Հայտնի չէ՝ կվերադառնա՞ն, թե՞ ոչ: Հերիք չէ, որ մենք մենակ ենք մնացել, իսկ հիմա էլ նա, վերջինը ընտանիքում, ինքն է ձգտում ռազմաճակատ ընկնել:

— Նա էնտեղ ճտի նման կկորչի: Դա պիոներջոկատավարություն չէ նրա համար:

— Ի՞նչ ես սուս մնացել, հա՛յր:

— Իսկ ի՞նչ ասեմ, ի՞նչ անեմ:

— Հենց հիմա նրա մոտ գնա, մենք կինդրենք, որ քեզ

թողնեն: Գնա և ասա, որ չհամարձակվի էդպիսի բան անել: Քանի դեռ ուշ չէ, համոզիր:

— Թող հրաժարվի, դեռ կհասցնի: Միայն դու կարող ես նրան համոզել:

— Ո՛չ, սպասեք,— քրթմնջաց Չորդոնը: Այդ իրադրության, այդ խառնաշփոթության մեջ նրա համար դժվար էր աղջիկներին կարգին բացատրել, թե չի կարելի մարդուց այդպիսի բան պահանջել: Իր խոսքից ինչպե՞ս հրաժարվի: Ինչպե՞ս կնայի այն մարդկանց աչքերին, որոնց հետ արդեն մի շարքում է կանգնած: Ի՞նչ կմտածեն նրա մասին, և նա ինքը հետո իր մասին ինչ կմտածի:

— Ոնց որ թե անհարմար է, կամաչի,— ասաց Չորդոնը:

— Ի՞նչ ամոթի բան կա:

— Ու՞մ ինչ գործն է, էստեղ նրան ո՞վ է ճանաչում, աստված իմ, ու՞մ է պետք նրա մասին իմանալ:

— Բայց չէ՞ որ ինքն իր մասին գիտե,— մռայլ առարկեց Չորդոնը:— Դա է ամենակարևորը:

— Ա՛խ, թող, հայրի՛կ, նա դեռ երեխա է: Գնա՛, գնա՛, քանի դեռ ուշ չէ:

Այդ պահին հենց ժողովուրդը շարժվեց, դժվաց, մի կողմ քաշվեց: Փոլային նվագախումբը քայլերգ թնդացրեց. կարմիր դրոշը փողփողաց վերևում, և զորակայանի դարպասից շարքով սկսեցին դուրս գալ մարտիկները, գնացքի բեռնումը հայտարարված էր: Իսկ աղջիկները, Չորդոնի թևքերին կառչած, շտապեցնում էին, հարբուրավոր ձայների ու երաժշտության մեջ բղավում.

— Շուտ կոմիսարի մոտ գնանք: Նա կայարանում է: Տղայիդ պետք է փրկես:

— Հա՛յր, գնանք, ի սեր մեր հիվանդ մոր: Կոմիսարին ասա մեր մոր մասին, ասա, որ նա մահամերձ է:

Այդ խոսքերի ժամանակ Չորդոնն սկսեց տատանվել: Եվ նրանք ուղեկցողների ամբոխի միջով նրան քարշ տվեցին դեպի կայարան, որտեղ վինվորներին ճանապարհող կոմիսարն էր:

Հրապարակից դեպի կայարանի շենքն էր տանում մի բարձր քարե սանդուղք: Սանդուղքի վրա վերից վար մարդիկ էին խռնված: Իսկ աղջիկները տաքացած, քրտնած մարմին-

ների միջով, պատերազմի վշտից մթագնած հարյուրավոր աչքերի մոտով, իրարից բաժանվող մարդկանց արցունքների, արիության ու հուսահատության միջով, թմբուկների թնդյունի ու վինվորական երաժշտության հնչյունների, հրապարակի վինվորների հրաժեշտի աղաղակների, իր սեփական ցավի ու հոգու լռելյայն ճիչի միջով նրան դեպի վերև էին քաշում:

Եվ թեև Չորդոնը հիանալի հասկանում էր, որ քույրերն իրենց եղբոր բարին, նրա և ամբողջ ընտանիքի համար լավն են միայն ցանկանում, որ նրանք յուրովի սիրում են իրենց եղբորն ու պահպանում, նրա մեջ խուլ չարություն էր բարձրանում աղջիկների հանդեպ, որ իրեն տանում են, որպեսզի որդու թիկունքում կարգադրություններ անի նրա կամքի ու արարքի ինքնուրույնության դեմ, նրա մեջ սպանի մարդու արժանապատվությունը: Իսկ աղջիկները աստիճանների վրայով, փոթորկվող ամբոխի միջով նրան շարունակ քարշ էին տալիս դեպի վեր: Սանդուղքի վերին աստիճանների վրա Չորդոնը վերջապես տեսավ քայլող շարասյունը, որի մեջ էր և իր որդին: Շարասյունը եզրափակում էր փողային նվագախումբը, դա վերջին խումբն էր, որ էշելոն էին նստեցնում: Սուլթանը քայլում էր վերջին շարքում: Չորդոնը անմիջապես նրան ճանաչեց և տեսավ, թե նա ինչպես է շուրջը նայում: Նա ժողովրդի մեջ հորն ու քույրերին էր որոնում: Եթե միայն նա իմանար, թե այդ պահին հորը կոմիսարի մոտ էին քարշ տալիս, որպեսզի նրա համար հրաժարումն աղերսի, որպեսզի սեփական աչքերում նրան ստորացնի, որպեսզի նրա մեջ մարդկային արժանապատվությունը նվաստացնի:

Հետո Չորդոնը տեսավ, թե ինչպես ամբոխի միջից դուրս վազեց կարմիր գլխաշորով մի աղջիկ: Նա նետվեց դեպի Սուլթանը, բայց նրան անմիջապես ետ մղեցին, և աղջիկը հասցրեց միայն նրա ձեռքը սեղմել:

Երբ մոտեցան կայարանի պետի առանձնասենյակին, որտեղ կոմիսարն էր, աղջիկներն սկսեցին նրան դեպի դուռը հրել:

— Գնա՛, շու՛տ գնա, ասա, որ հայրն ես, մոր մասին ասա: Ասա, որ նա չի մտածել, դեռ փոքր տղա է: Խնդրիր, թող էշելոնից իջեցնեն: Ամեն ինչ տեղը տեղին բացատրիր:

— Դե գնա, հա՛յր, ի՞նչ ես նայում: Ամեն րոպեն թանկ է:

Չորդոնն սկսեց ամաչել մարդկանցից, թեև նրա վրա ոչ

ոչ ուշադրություն չէր դարձնում: Ե՛վ գինվորականները, և՛ քաղաքացիական սպաշտոնյաները, իրենց գործերով զբաղված, ասանոզ վազվզում էին:

— Ես Լոգեն սովոր չեմ, չեմ գնա,— կտրականապես հրաժարվեց Զորդոնը:

— Ոչ, կգնաս:

— Իսկ եթե չգնաս, մենք ինքներս կգնանք: Մենք ինքներս գլուխ կբերենք:— Եվ, հասկերությունները կորցրած, աղջիկները նետվեցին դեպի կռիվարի առանձնասենյակի դուռը:

— Հանգարձակվե՛ք, չգնա՛ք,— Զորդոնը շտապով նրանց թևերից բռնելով, դեպի հեք քարշ ավեց:

Նա թափով քարշ էր տալիս նրանց նորից ամբոխի միջով սանդուղքի աստիճաններով ներքև: Եվ այդ որսին նա աղջիկներից լսեց այն, ինչը մարդ հալվաղեպ է լսում իր գայլերից:

— Դու քո որդուն մահվան ես քշում:

— Անիծյալ լինես, դու մեր հայրը չես:

— Այո՛, դու մեր հայրը չես,— հառաչեց մյուսը:

Գունատված Զորդոնը դանդաղորեն բաց արեց սեղմած մատները, բաց թողեց նրանց ձեռքերը, լուռ շրջվեց և մարդկանց հրմշտելով նետվեց դեպի հրապարակ: Նա շտապում էր հրաժեշտ տալ որդուն, ճեղքելով մարդկային անտառը, ճանապարհ էր բացում դեպի որդին, ադամակ-ադաղակի միջով աշխատում էր հասնել կառամատույցին, բեռնման հարթակին: Բայց դեպի այնտեղ մուտքն արդեն արգելված էր: Կառամատույցին հորձանք էր տալիս մարդկային սև զանգվածը, որտեղ էր փողոցին նվագախումբը, այնտեղ մարդ ոտք դնել չէր կարող:

Զորդոնը կառամատույցի վանդակորմին սեղմված, գլուխների ծովի վրայով նայում էր վերջին երկար գնացքակազմի կարմիր վագոններին:

— Սուլթա՛ն, Սուլթա՛ն, որդիս, ես այստեղ եմ: Լսո՞ւմ ես ինձ,— ձեռքերը վանդակորմից ներս կարկառած բղավում էր նա:

Բայց բղավելը չէր օգնի: Պատի կողքին կանգնած երկաթուղայինը հարցրեց.

— Չի ունե՞ս:

— Այո,— պատասխանեց Զորդոնը:

— Իսկ գիտե՞ս, թե որտեղ է տեսակավորման կայանը:

— Գիտեմ, մյուս կողմը:

— Ուրեմն տես թե ինչ, ելքիկ, նռան ձիգ և սրացիր էնտեղ: Տեսանես, մի հինգ կիլոմետր է, ոչ ավելի: Էշերոնը մի բան էնտեղ կկանգնի, էնտեղ էլ դրդոց հրամիջա կառաս, միայն թե արագ գլիր, մի կանգնիր:

Զորդոնը հրազարակում դեռ ու դեռ նետվեց, մինչև իր ձին գտավ, և հիշում է, միայն, թե ինչպես թռավ բացից եռասանակի հանգույցը, ոտքը ասպանդակին դեռեց, ինչպես մարտով վազեց ձիու կողքը և կրակած դացով փոքրացավ երկրատրա երկայնքով: Ասես, թնդյունով արձագանքով փոքրացավ, փախեցնելով հարվածող հանդիպող հեռխոսն ու հեծյալ անցորդներին, նա ստրաց կատաղի բչչիքի նման: «Միայն թե հասնեմ, միայն թե հասնեմ, այնքան շատ բան է, հարկավոր ասել դրդուս»,— մտածում էր և ասվոց սեղմած սասանները բացկում ստրատոյ հեծելի ազեղան ու թախանձանքը. «Օգնեցեք ինձ, նախնիների ոգիներ: Օգնիր ինձ, նժույգների աստվածան Կատրար-ատա, թույլ մի տար, որ ձիս ասաթարի: Բալեի թևեր տար նրան, երկաթե սիրտ տար նրան, եղջերվի ոտքեր տար նրան, ձկան թրթիռ տար նրան»:

Փոքրն անցնելով, Զորդոնը դուրս եկավ երկաթուղու թրթի նեղքեի ստահեար և նորից ձին բաց թողեց: Տեսակավորման կայարանն արդեն հետս չէր, երբ թեքուելիս սկսեց նրան հասնել Էշերոնի ատմոսֆերը: Երկու, իրար հանելիս շարժված շոգեքարշերի ծանր, ասես դրդյունը վիշտ լեռան նման իջավ նրա կրակած գլուխ ուսերին:

Էշերոնն անցավ սրացող Զորդոնից: Ձին արդեն ուժասպառվել էր: Բայց Զորդոնը հասնելու հույս ուներ, միայն թե գնացքը կանգ առներ, մինչև տեսակավորման կայարանը քիչ էր մնում: Եվ երկրորդն ու ասաղասարը, թե գնացքը կարող է հանկարծ կանգ չառնել, նրան սարսափելի ասասծուն հիշեց. «Տե՛ր աստված, եթե դա կաս երկրի վրա, կանգնեցրու՛ այդ Էշերոնը: Խնդրում եմ, կանգնեցրու՛, կանգնեցրու՛ Էշերոնը»:

Էշերոնն արդեն կանգնած էր տեսակավորման կայարանում, երբ Զորդոնը հավասարվեց զոչի վագոնների: Իսկ արդեն վազում էր գնացքի երկարությամբ նրան բնդառաջ: Նրան

տեսնելով, Զորդոնը ձիուց ցած թռավ: Նրանք լուռ իրար գիրկ նետվեցին և, աշխարհում ամեն ինչ մոռացած, քարացան:

— Հա՛յր, ներիր ինձ, կամավոր եմ գնում,— ասաց Սուլթանը:

— Գիտեմ, որդյակ:

— Ես քույրերիս նեղացրի, հա՛յր: Եթե կարող են, թող մոռանան վիրավորանքը:

— Նրանք քեզ ներել են: Նրանցից մի նեղանա, մի մոռանա, գրիր նրանց, լսո՞ւմ ես: Մորդ էլ մի մոռանա:

— Լավ, հա՛յր:

Կայարանում զանգը մեն-մենակ ճչեց, հարկավոր էր բաժանվել: Հայրը վերջին անգամ նայեց որդու դեմքին և մի ակնթարթ նրա մեջ տեսավ իր դիմագծերը, իրեն դեռ երիտասարդ, դեռ պատանեկության արշալույսին: Նա ամուր կրծքին սեղմեց որդուն: Եվ այդ պահին իր ամբողջ էությամբ ցանկացավ որդուն փոխանցել հայրական սերը: Նրան հաղորդելով, Զորդոնը միևնույն բանն էր կրկնում.

— Մարդ եղիր, որդիս: Որտեղ էլ որ լինես, մարդ եղիր: Միշտ մարդ մնա:

Վագոնները ցնցվեցին:

— Զորդոնո՛վ, ճանապարհվում ենք,— բղավեց հրամանատարը:

Եվ երբ ընթացքի հետ Սուլթանին վազող քաշեցին, Զորդոնը ձեռքերը կախ գցեց, հետո շրջվեց և, փաթաթելով ձիու քթոնած, տաք բաշին, հեկեկաց: Ձիու սպարանոցը գրկած նա լալիս էր և այնպես ուժգին ցնցվում, որ նրա վշտի ծանրության տակ ձին ամբակներն էր տեղից տեղ փոխում:

Երկաթուղայինները լուռ անցնում էին կողքից: Նրանք գիտեին, թե այդ օրերին ինչու են լալիս: Միայն կայարանային մանչուկները, հանկարծ սակլեով, կանգ առան և հետաքրքրությամբ ու մանկական ցավակցությամբ նայեցին այդ մեծ, ծեր, լացող մարդուն:

Արևը երկու բարդու չափ բարձրացել էր լեռներից վերև, երբ Զորդոնը, Փոքր ձորը անցնելով, դուրս եկավ լայն տարածությունները բլրաշատ հովտի, որ ձգվում էր ընդհուպ մինչև ձյունոտ լեռների ստորոտները: Զորդոնի շունչը կտրվեց: Այս երկրում է ապրել նրա որդին...